ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀՈՒԼԻՍԻ 10-ԻՆ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԹՂԹԱԿՑԻՆ ԵՎ ԱՐԵՑ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ Ի ԽՆԴԻՐ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ

«Յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» երկնային պատգամը հետզհետե այժմեական ու հրամայական է դառնում մեր օրերին:

Հայաստանյայց Եկեղեցին ու իր ժողովուրդը գուցե ավելի քան ուրիշներ տենչանքը ունեն մեր երկրագնդի վրա իրականացած տեսնելու այս հրամայականը, որովհետև այդ է մեր Աստուծո կամքը և այդ է մեր ազգի ամենաջերմ աղոթքը:

Հայ Եկեղեցին ու իր ժողովուրդը, ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի, գիտակցում են, թե իրենց ճակատագիրը, իրենց հոգևոր ու ազգային իղձերի ու երազանքների կենսագործումը պայմանավորված են աշխարհի խաղաղության պահպանումով և պետությունների համերաշխ գործակցությամբ:

Ահա թե ինչու սրտանց ողջունում ենք խաղաղասիրական նոր դիմումը Սովետական Միության Գերագույն սովետի՝ ուղղված աշխարհի պառլամենտներին և ժողովուրդներին:

Այս դիմումը Մենք նկատում ենք պատմական մի փաստաթուղթ, որ կոչված է ամուր հիմք հանդիսանալու պետությունների խաղաղ գոյակցության և արդար դրության միջազգային հարաբերությունների, իրավահավասար բանակցությունների ճանապարհով, որով ընդմիշտ կարող է մարդկային կյանքի հորիզոնից հեռացվել աշխարհակործան մի նոր պատերազմի սպառնալիքը:

Սույն Մեր խոսքով Մենք ջերմորեն ողջունում ենք նաև Ռուսաց Եկեղեցու Պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի աստվածահաճո առաջարկը՝ հրավիրելու մի համաժողով աշխարհի բոլոր կրոնապետների և կրոնական

բարձրաստիճան գործիչների՝ ի պաշտպանություն խաղաղության սրբազան դատի: Մաղթում ենք, որ մոտ ապագայում հնարավոր դառնա գումարումը նման մի համաժողովի՝ ի միխթարություն բոլոր հավատացյալների, ի միխթարություն բոլոր բարի կամքի տեր մարդկանց:

Մեր օրերի մարդիկ ու ազգություններ, բոլորը անխտիր, կարծում ենք այլևս չեն կարող հաշտվել այն մտքի հետ, որ որևէ պատերազմ կարող է վիճելի հարցերի լուծման միջոց հանդիսանալ: Դա բացառված է վերջնականապես: Մարդկության արդի և հետագա կյանքի ուղին կարող է լինել՝ միջազգային բոլոր տեսակի հարցերի լուծումը ապահովել միմիայն խաղաղ գոյակցությամբ, սրտաբաց բանակցություններով, շինարար գործակցությամբ, անսակարկ համբերությամբ ու մարդասիրական լավատեսությամբ:

Խաղաղությունը մեր ժամանակների ալֆան և օմեգան է:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 հուլիսի 1981 թ.